## ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

*Աղյուսակ 2.3.1*

ՑՈՒՑԱՆԻՇ	ՔԱՆԱԿ
<b>1. Գիտական հրատարակումներ, այդ թվում</b>	
<i>1.1 Գիտական հոդվածներ, այդ թվում՝</i>	
<i>ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված ցանկին համապատասխան հայաստանյան հրատարակումներ</i>	<b>90</b>
<i>Հայաստանյան այլ հրատարակումներ</i>	<b>9</b>
<i>Օտարերկրյա հրատարակումներ, այդ թվում</i>	
<ul style="list-style-type: none"> <li>• <i>Scopus և Web of science համակարգերում ընդգրկված պարբերականներում կամ գիտական հրատարակություններում</i></li> </ul>	<b>35,</b> <b>որից 5-ը ԱԳ ունեցող</b>
<ul style="list-style-type: none"> <li>• <i>Օտարերկրյա այլ հրապարակումներ</i></li> </ul>	<b>32</b>
<b>1.2 Գրքեր, մենագրություններ</b>	<b>3</b>
<b>1.3 Ուսումնամեթոդական ձեռնարկներ</b>	<b>8</b>
<b>1.4 ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված հայաստանյան գիտական պարբերականներ, այդ թվում՝</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• <i>«ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ»</i></li> </ul>	<b>45</b>
<ul style="list-style-type: none"> <li>• <i>«ՃՇՀԱՀ տեղեկագիր»</i></li> </ul>	<b>45</b>

<b>2. Մտավոր սեփականություն</b>	
• <i>ՀՀ օգտակար մոդել, գյուտ</i>	
<b>3. Գիտական միջոցառումների մասնակցություն զեկուցումներով, այդ թվում՝</b>	
• <i>Միջազգային</i>	<b>26</b>
• <i>Տեղական</i>	<b>12</b>
<b>4. Հայաստանյան կազմակերպությունների աշխատակիցների հետ համահեղինակությամբ իրականացված աշխատանքներ</b>	
<b>3</b>	
<b>5. Օտարերկրյա կազմակերպությունների աշխատակիցների հետ համահեղինակությամբ իրականացված աշխատանքներ</b>	
<b>10</b>	
<b>6. Համալսարանի անդամակցություն միջազգային գիտական ընկերություններին, կազմակերպություններին</b>	
<b>7</b>	
<b>7. Գիտաշխատողների անդամակցություն միջազգային գիտական ընկերություններին, կազմակերպություններին</b>	
<b>19</b>	
<b>8. Գիտաշխատողների անդամակցություն գիտական պարբերականների խմբագրական խորհուրդներին, այդ թվում՝</b>	
• <i>Հայաստանի Հանրապետության</i>	<b>38</b>
• <i>Օտարերկրյա</i>	<b>7</b>
<b>9. Պարգևներ և մրցանակներ, այդ թվում</b>	
«Գոտի և ուղի» ճարտարապետական համալսարանների միջազգային կոնսորցիումի անդամ բուհերի նախագահական համաժողովի շրջանակում անցկացված ճարտարապետական ուսանողական մրցույթ	<b>1</b>
5-րդ համառուսական փառատոն «Драйверы развития современного города»	<b>1</b>
ՀՀ-ում Լիտվայի դեսպանատան և ՃՇՀԱՀ-ի կողմից անցկացվող լիտվացի պատմաբան, արվեստաբան Յուրգիս Բալտրուշայտիսի անվան ամենամյա մրցանակ	<b>1 (1500 եվրո)</b>

#### **2.4 Գիտամանկավարժական կադրերի պատրաստում**

Գիտամանկավարժական կադրերի պատրաստումը ՃՇՀԱՀ գիտական գործունեության կարևոր բաղադրիչներից է: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը երիտասարդ, որակյալ և կայուն կադրերով համալրելու գործում ՃՇՀԱՀ-ում կարևորվում է երրորդ աստիճանի կրթությունը: Այդ ուղղությամբ ՃՇՀԱՀ-ում առկա ցուցանիշները բերված են՝ աղյուսակներ 2.4.1-2.4.3-ում:

2020թ. 030-«Շինարարություն» և 029-«Ճարտարապետություն» մասնագիտական խորհուրդներում դոկտորական և թեկնածուական պաշտպանությունների քանակը

Աղյուսակ 2.4.1

Մասնագիտական խորհուրդ	դոկտորական	թեկնածուական	ընդամենը
030 «Շինարարություն»	-	2	2
029 «Ճարտարապետություն»	-	-	-
<b>Ընդհանուր</b>	-	2	2

2020թ. առկա և հեռակա ասպիրանտուրա և դոկտորանտուրա ընդունելության տվյալները (ՀՀ քաղաքացիների համար)

Աղյուսակ 2.4.2

Մասնագիտություն	Ասպիրանտներ		Դոկտորանտներ	Ընդամենը
	առկա	հեռակա		
ԺԸ.00.01	2	-	1	3
Ե.23.01	1	-	-	1
Ե.23.03	-	-	1	1
Ե.23.06	1	-	-	1
<b>Ընդհանուր</b>	<b>4</b>	<b>-</b>	<b>2</b>	<b>6</b>

Ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների թվաքանակը 25.12.2020թ. դրությամբ (ՀՀ և արտասահմանցի քաղաքացիների համար)

Աղյուսակ 2.4.3

Ասպիրանտներ				Հայցորդներ		Դոկտորանտներ	Ընդամենը
Առկա	Հեռակա	Առկա վճարովի (արտասահմանցի)	Հեռակա վճարովի (արտասահմանցի)	Վճարովի	Վճարովի (արտասահմանցի)		
10	6	1	-	10	1	5	33

## **2.5 2021թ.-ին նախատեսվող միջոցառումներ.**

1. Իրականացնել Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ հիմնարար և կիրառական հետազոտության 3 ծրագրեր:
2. Կազմակերպել և անցկացնել «Ճարտարապետության և շինարարության արդի հիմնախնդիրները» խորագրով 13-րդ միջազգային գիտաժողովը: Գիտաժողովի գրքի տպագրություն:
3. *Scientific net* հրատարակչության հետ կնքել պայմանագիր, որի համաձայն գիտաժողովի **«Շինարարական նյութերի և տեխնոլոգիաների, կապակցող նյութերի, բետոնների, ճարտարապետությունում ժամանակակից նյութերի»** թեմային վերաբերող հոդվածները կտպագրվեն *scopus*-ում ինդեքսավորվող պարբերականում:
4. Կազմակերպել և անցկացնել **«Сохранение культурного наследия как ресурс диалога между государствами»** խորագրով միջազգային գիտաժողովը:
5. Մշակել համալսարանում գիտության զարգացման ռազմավարություն:
6. Համագործակցել միջազգային բարձր գիտական վարկանիշավորում ունեցող ոլորտային գիտանկանների հետ:

### 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՃՇՀԱՀ միջազգային կապերը ներառում է արտասահմանյան քաղաքացիների ուսումնառության, համալսարանի միջազգային համագործակցության, գիտահետազոտական, մարզամշակութային, միջազգային ծրագրերի մասնակցության ոլորտներ:

Համալսարանն ունի միջազգային համագործակցության 67 գործող համաձայնագիր: 2020թ.-ին կնքել է համագործակցության 7 համաձայնագիր:

#### 3.1 Ուսումնական ոլորտ

Արտերկրի քաղաքացիների ուսուցումը, որպես ուսումնառողներ իրականացվել է պետպատվերի և պայմանագրային հիմունքներով:

**2019-2020 ուստարում համալսարանում ուսումնառել է 160 արտասահմանցի (սփյուռքահայ – 142, այլազգի սովորող – 18).**

*Սփյուռքահայեր – 142, անվճար կարգավիճակով – 19, վճարովի կարգավիճակով – 123*

*Այլազգի սովորողներ – 18 վճարովի կարգավիճակով*

**2020թ. համալսարանն ունեցել է 33 արտասահմանցի շրջանավարտ.**

**Բակալավր՝ 25, մագիստրոս՝ 8:**

**2019-2020 ուստարվա ավարտական/ընդունելության քննությանը մասնակցել են նախապատրաստական խմբի 11 ուսանող:**

Ավարտական քննությունների արդյունքներով, որոնք համարվում են նաև ընդունելության, **բակալավրիատի** առաջին կուրս է ընդունվել **11 ուսանող:** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ուղեգրերով և գիտելիքների ստուգման արդյունքով բակալավրիատի առկա ուսուցմամբ առաջին կուրս է ընդունվել նաև արտասահմանցի **8 դիմորդ,** 4-ը անվճար, 4-ը՝ վճարովի հիմունքներով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ուղեգրերով **մագիստրատուրայի** առկա ուսուցմամբ առաջին կուրս է ընդունվել **2019-2020 ուստարվա բակալավրիատի 3 և 2018-2019 ուստարվա բակալավրիատի 1 շրջանավարտ:**

Մրցութային հիմունքներով բակալավրիատի առկա ուսուցմամբ առաջին կուրս է ընդունվել **2 արտասահմանցի,** մագիստրատուրայի **2 արտասահմանցի** (1-ը առկա, 1-հեռակա ուսուցմամբ):

2020-2021 ուսումնական տարում արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական խումբ ընդունվել է **17 արտասահմանցի՝** հայերենով ուսուցանվող խումբ՝ 7, անգլերենով ուսուցանվող խումբ՝ 10:

**2020թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ համալսարանում սովորում է 150 արտասահմանցի (սփյուռքահայ՝ 132, այլազգի՝ 18).**

- Նախապատրաստական խումբ - 17
- Բակալավրիատ – 117
- Մագիստրատուրա – 14,
- Ասպիրանտուրա - 2



**Արտասահմանցի սովորողների թիվն ըստ կուրսերի և երկրների  
28.12.2020թ. դրությամբ**

*Աղյուսակ 3.1.1*

Կուրս Երկիր	Իրան	Սիրիա	Հնդկաստան	Վրաստան	ՌԴ	Իրաք	Լիբանան	Ուկրաինա	Թուրքիա	Հորդանան	Ղազախստան	Ուզբեկստան	Մարոկկո	Եգիպտոս	Էկվադոր	Ընդամենը
	Նախապատրաստական															
Նախապատրաստական	1-հայ	6-հայ	5-այլազգի	-	-	-	4-հայ	-	-	-	-	-	-	1-այլազգի	-	17
	Բակալավրի կրթական ծրագրով															
I	2-հայ	4-հայ 1-այլազգի	-	5-հայ	4-հայ	-	-	-	-	1-այլազգի	-	-	1-այլազգի	2-այլազգի	-	20
II	-	13-հայ	2-այլազգի	7-հայ	8-հայ	2-այլազգի	2-հայ	-	-	-	1-հայ	1-հայ	-	-	1-այլազգի	37
III	-	6-հայ	-	11-հայ	5-հայ	-	1-հայ	1-հայ	2-հայ	1-հայ	-	-	-	-	-	27
IV	1-հայ	15-հայ	-	3-հայ	7-հայ	1-հայ	1-հայ	-	-	-	-	-	-	-	-	28
V	-	2-հայ	-	1-հայ	2-հայ	-	-	-	-	-	-	-	-	-	-	5
	Մագիստրի կրթական ծրագրով															
I	1-այլազգի	1-հայ	1-այլազգի	2-հայ	1-հայ	-	-	-	-	-	-	-	-	-	-	6
II	1-հայ	3-հայ	-	3-հայ	1-հայ	-	-	-	-	-	-	-	-	-	-	8
	Ասպիրանտուրա															
Ասպիրանտներ	1-այլազգի	-	-	-	1-հայ	-	-	-	-	-	-	-	-	-	-	2
<b>Ընդամենը</b>	<b>7</b>	<b>51</b>	<b>8</b>	<b>32</b>	<b>29</b>	<b>3</b>	<b>8</b>	<b>1</b>	<b>2</b>	<b>2</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>3</b>	<b>1</b>	<b>150</b>

### ***3.2 Միջազգային համագործակցությամբ իրականացված միջոցառումներ***

#### **Միջբուհական համաձայնագրերով համագործակցության շրջանակներում իրականացվել են ուսանողների, դասախոսների փոխանակումներ**

- Ֆրանսիայի Կլերմոն-Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի (ԿՖԱԲՃԴ) հետ նախագծային աշխատանքներ Կլերմոն Ֆերանում – **2 դասախոս, 10 ուսանող** (փետրվարի 7-ից 18-ը):

Համալսարանը մասնակցել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող Erasmus+ IACOBUS+, Erasmus+ KA1, All 4 R&D, Erasmus+ FLEXWBL ծրագրերին:

Վերոհիշյալ ծրագրերի շրջանակներում իրականացվել են ՃՇՀԱՀ-ի 12 ուսանողի փոխանակումներ՝ Իսպանիայի Ալկալայի, Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարաններում, Իտալիայի Միլանի պոլիտեխնիկում, Լեհաստանի Վարշավայի էկոլոգիայի և մենեջմենթի համալսարանում, ՃՇՀԱՀ-ում կազմակերպվել են «Համագործակցային, ազատ և նորարարական հարթակի միջոցով ակադեմիա – բիզնես համագործակցության խթանումը՝ հանուն հետազոտության և զարգացման» Էրազմուս + All4R&D նախագծի մշտադիտարկման, կրթական, հետազոտական և գիտական նախադրյալները՝ Էրազմուս+ ծրագրի տարբեր նախագծերի շրջանակում քննարկումներ:

#### **Արտասահմանյան բուհերի և կազմակերպությունների ներկայացուցիչները ՃՇՀԱՀ-ում**

- Ֆրանսիայի Սենտ Էտիենի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի հետ համագործակցության շրջանակում Երևանում կազմակերպված ամենամյա համատեղ նախագծային աշխատանքներ - Սենտ Էտիենի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի **4 դասախոս, 19 ուսանող** (մարտի 9-ից 15-ը):

#### **Համալսարանում կազմակերպվել են.**

- «ՌՕՔԵՄՓ մշակութային ժառանգության պահպանման, կառավարման և արժևորման հայ-իտալական տարածաշրջանային կենտրոնի» հետ համագործակցության շրջանակում՝ «Հուշարձանների պահպանում և ամրակայում. ՌՕՔԵՄՓ 2020» մշակութային ժառանգության Հայաստանի, Բելգիայի, Վրաստանի, Եգիպտոսի մասնագետների փորձագետների ինտենսիվ վերապատրաստման դասընթացներ (փետրվարի 17-ից 25-ը):

**Միջազգային սեմինարներ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, ամառային դպրոցներ**

- Նովոսիբիրսկի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում առցանց եղանակով կայացած «Շինարարության և բնապահպանական ոլորտներում առկա խնդիրների լուծման միջազգային փորձը» խորագրով կլոր սեղան – 1 դասախոս (մայիսի 9-ը):
- Գերմանիայի VOLKSWAGEN հիմնադրամի կողմից պրոֆեսոր Զիգֆրիդ Զիգեսմունդի ղեկավարությամբ և նախաձեռնությամբ առցանց եղանակով կազմակերպված քարե շինությունների և հայկական ժառանգության պահպանմանը նվիրված «Քարերի դերը հայ ճարտարապետությունում» խորագիրը կրող ամառային դպրոց – 2 դասախոսն (հունիսի 8-18-ը):
- Բոլոնիայի համալսարանի կողմից առցանց եղանակով կազմակերպված ԱՂԵՏՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎՏԱՆԳՎԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ պահպանության հարցերին վերաբերող քննարկումներ – 1 դասախոս (հուլիսի 1-15-ը):
- Իտալիայի Ֆեռարա համալսարանի կողմից կազմակերպված AFTER THE DAMAGES (Վնասվածքներից հետո) խորագրով երկշաբաթյա միջազգային ամառային առցանց դպրոց - 2 դասախոս (հուլիսի 1-ից 15-ը):
- ՌԴ Դնեպրի պոլիտեխնիկական համալսարանի կողմից առցանց եղանակով կազմակերպված «Կրթության, գիտության և բիզնեսի ինտեգրումը ժամանակակից միջավայր. ամառային քննարկումներ» խորագրով միջազգային համաժողով – 1 դասախոս (օգոստոսի 17-18-ը):
- Իտալիայի Ռոմուալդո Դել Բիանկո կողմից առցանց եղանակով կազմակերպված «Խաղաղության հաստատումը ժառանգության պահպանության միջոցով» խորագիրը կրող ամենամյա միջազգային գիտաժողով - 2 դասախոս
- «Գոտի և ուղի» ճարտարապետական համալսարանների միջազգային կոնսորցիումի անդամ բուհերի նախագահական առցանց համաժողով և ճարտարապետական ուսանողական մրցույթի արդյունքների ամփոփում – 4 աշխատակից, «Ճարտարապետական նախագծում» անվանակարգում ճարտարապետության ֆակուլտետի ուսանողներ Վ.Աղաջանյանի և Լ.Գալստյանի՝ «Մուրբ Ղազար կղզու Մխիթարյան Մայրավանքի գրադարանի ռեվալորիզացիայի հայեցակարգ» նախագիծն արժանացավ պատվոգրի (ղեկավարներ՝ պրոֆեսոր Արտյոմ Ալոյան, դոցենտ Հովհաննես Սանամյան): Նույն մրցույթի «Կոնստրուկտիվ նախագծում» անվանակարգում ճարտարապետության ֆակուլտետի ուսանող Մ.Գևորգյանի՝ «Ջերմուկ քաղաքի հյուրանոցի, կամուրջի և բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում» նախագիծն արժանացավ մրցանակային երրորդ տեղի և դրամական պարգևի (ղեկավար՝ պրոֆեսոր Հայկ Ասատրյան) (հոկտեմբերի 31):
- Մանկտ-Պետերբուրգի պետական ճարտարախաչատաշինարարական համալսարանի հետ համատեղ «Ճարտարապետություն, շինարարություն՝ արդի հիմնախնդիրները» խորագրով 12-րդ միջազգային գիտաժողով առցանց եղանակով (նոյեմբերի 25-26):

- Տյումենի արդյունաբերական համալսարանի կողմից առցանց եղանակով կազմակերպված «Տյումեն քաղաքի կենտրոնական փողոցի ռենովացիա» խորագրով միջազգային մրցույթ - 1 դասախոս (դեկտեմբերի 7-ից 12-ը):
- Սանկտ Պետերբուրգի արտադրական տեխնոլոգիաների և դիզայնի պետական համալսարանի, Երևանում РОССОТРУДНИЧЕСТВО հետ համագործակցության շրջանակներում առցանց եղանակով կազմակերպված նկարչության վարպետության դաս - դիզայնի ֆակուլտետի ուսանողներ, Մ. Աբեդյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտներ:
- Հյուսիս-կովկասյան դաշնային համալսարանի հետ համագործակցության շրջանակում առցանց եղանակով «Մեծ Կովկաս» ռուսալեզու բուհերի կոնսորցիում – 3 աշխատակից (դեկտեմբերի 25)

### **Պաշտոնական միջոցառումներ, հյուրերի ընդունելություն**

- Սանկտ Պետերբուրգի արտադրական տեխնոլոգիաների և դիզայնի պետական համալսարանից - 4 ներկայացուցիչ (Մ.Աբեդյանի անվան ավագ դպրոցի աշակերտների համար գծանկարի և գունանկարի «Creative Russia» միջազգային օլիմպիադայի անցկացում, համագործակցության հարցերի քննարկում) (հունվարի 27-ից 29-ը):
- Նորարարական տեխնոլոգիաների ոլորտում միջազգային ճանաչում ունեցող Trimble ընկերությունից - 3 ներկայացուցիչ (ուսումնական պլանում առաջատար Tekla ծրագրերի փաթեթի ներմուծման հարցի քննարկում) (փետրվարի 4):
- Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստան-Թուրքիա փորձի փոխանակման նախագծի շրջանակներում «Հրանտ Դինք» հիմնադրամից – 1 ներկայացուցիչ (փետրվարի 11):
- ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության դեսպանությունից – 2 ներկայացուցիչ (Լիտվայի դեսպանության, բուհերի և կազմակերպությունների հետ համալսարանի համագործակցությունն ու իրականացրած ծրագրերի գնահատում, հետագա համագործակցության հարցերի քննարկում) (փետրվարի 12):
- Մշակութային ժառանգության պահպանության, կառավարման և արժևորման հայ-իտալական տարածաշրջանային կենտրոնից – 1 ներկայացուցիչ (կենտրոնի կողմից կազմակերպվող վերապատրաստման ծրագրի հետ կապված հարցերի քննարկում) (փետրվարի 13):
- «Պետրոս Ալոյան»-ի անվան հիմնադրամի, ՀՀ-ում Լիտվայի դեսպանատան և ՃՇՀԱՀ-ի կողմից անցկացվող լիտվացի պատմաբան, արվեստաբան Յուրգիս Բալտրուշայտիսի անվան ամենամյա մրցանակի հանձնում ճարտարապետության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Աննա Քարամյանին (դեկտեմբերի 11-ին):

- Հայաստանում РОССОТРУДНИЧЕСТВО գիտության և մշակույթի ռուսաստանյան կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում Ռուսաց լեզվի կենտրոնի բացում համալսարանում (դեկտեմբերի 11-ին):

### ***3.3 Միջազգային ուսանողական մրցույթներ***

- Տյումենի արդյունաբերական համալսարանի կողմից առցանց եղանակով կազմակերպված «Золотая АрхИдея-2020» ամենամյա միջազգային երիտասարդական ճարտարապետագեղարվեստական փառատոն և «Ճարտարապետություն և ճարտարապետական միջավայրի պատմական և ժամանակակից զարգացման խնդիրները» խորագրով գիտաժողով – 1 դասախոս (4 ուսանողների ներկայացված աշխատանքներն արժանացել են 3 մրցանակի) (հունիսի 15-ը):

#### **Միջազգային կազմակերպություններին անդամակցություն**

- ԱՊՀ երկրների ճարտարապետական և շինարարության մասնագիտություններով բուհերի ասոցիացիա
- REA-Ֆրանսիայի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ճարտարապետական բարձրագույն դպրոցների ցանց
- AUF - Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալություն
- Իտալական “Romualdo Del Bianco Foundation” կազմակերպություն
- Межрегиональная общественная организация содействия архитектурному образованию (МООСАО)
- Գոտի և ուղի ճարտարապետական համալսարանների միջազգային կոնսորցիում
- Международная Ассоциация Союзов Архитекторов (МАСА)

### ***3.4 2021թ.-ին նախատեսվող միջոցառումներ և փոխանակումներ***

- Վարկանիշավորման գործընթացի իրականացում:
- Համալսարանի կրթական ծրագրերի բարելավում, դասախոսների, փորձագետների փոխանակում:
- Հավատարմագրման գործընթացի իրականացում:
- Ֆրանսիայի Լիոնի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի հետ համատեղ ուսանողական նախագծային շաբաթ Երևանում (մարտ - ապրիլ):

- **Իտալական դիզայնի օրերի** անցկացումը ՃՇՀԱՀ-ում (մարտ):
- **Ֆրանսիայի Կլերմոն Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի** հետ համատեղ ուսանողական նախագծային շաբաթներ Ֆրանսիայում (փետրվար-մարտ) և Երևանում (ապրիլ-մայիս):
- **Ֆրանսիայի Սենտ Էտիենի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի** հետ համատեղ ուսանողական նախագծային շաբաթներ Ֆրանսիայում և Երևանում (մարտ, հունիս):
- Մասնակցություն **REA-25** (Ֆրանսիայի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի ճարտարապետական բարձրագույն դպրոցների ցանցի) կողմից կազմակերպվող հերթական միջազգային ուսանողական ստուգատեսին և գիտաժողովին (ապրիլ):
- **"IACOBUS+" ծրագրի** շրջանակում ուսանողական նախագծային շաբաթներ (մարտի-մայիս):
- **Գերմանիայի Գյոթինգենի Գեորգ Ավգուստ համալսարանի** հետ համագործակցության շրջանակներում 4-րդ ամառային դպրոցի անցկացում Երևանում (հունիս):
- **Նյու Ջերսիի Ռատգերսի համալսարանի և Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ներկայացուցիչների** այց ՃՇՀԱՀ դասախոսություններ ներկայացնելու նպատակով (գարուն կամ աշուն):
- **«Պատմամշակութային ժառանգության պահպանությունը՝ որպես պետությունների միջև արդյունավետ երկխոսության միջոց»** միջազգային գիտաժողովի անցկացում (հոկտեմբեր 5-ից 8-ը):
- **«Ճարտարապետություն, շինարարություն՝ արդի հիմնախնդիրները»** խորագրով 13-րդ միջազգային գիտաժողովի կազմակերպում և անցկացում համալսարանում (հոկտեմբեր):
- **Ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումների անցկացում:**
- **Համալսարանի 100-ամյակին նվիրված միջոցառումներ:**
- **Erasmus+ ծրագրի** շրջանակներում հաստատվել է **Բարձրագույն կրթության կարողությունների զարգացման 3 նոր ծրագիր, յուրաքանչյուրը 36 ամիս տևողությամբ, մեկնարկը՝ 2021թ. հունվարից:**

**Erasmus+ KA1 փոխանակման ծրագրի շրջանակում.**

- 1 դասախոսի փոխանակում **Իսպանիայի Կոռունայի համալսարանում** 7 օր ժամկետով,
- 1 դասախոսի փոխանակում **Իսպանիայի Մալագայի համալսարանում** 7 օր ժամկետով,
- 1 ուսանողի ուսումնառություն **Իսպանիայի Մալագայի համալսարանում** 5 ամիս ժամկետով,
- 1 դասախոսի փոխանակում **Իսպանիայի Մալագայի համալսարանում** 7 օր ժամկետով,
- 3 ուսանողի ուսումնառություն **Իսպանիայի Վալենսիայի պոլիտեխնիկում** 5 ամիս ժամկետով,

- 1 դասախոսի փոխանակում **Իսպանիայի Մալագայի համալսարանից** ՃՇՀԱՀ-ում 7 օր ժամկետով:
- 1 դասախոսի և 4 ուսանողի փոխանակում **Ավստրիայի Կարինթիայի երկրամասի կիառական գիտությունների համալսարանում:**
- 3 դասախոսի, ուսանողի փոխանակում **Իսպանիայի Կաստելոյի դիզայնի դպրոցում:**
- 1 դասախոսի փոխանակում **Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանում** 7 օր ժամկետով:
- 2 ուսանողի ուսումնառություն **Ուդինեի համալսարանում** 5 ամիս ժամկետով:

## 4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Որակի ապահովման կենտրոնը՝ համաձայն 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսների գործողությունների պլանի, կազմակերպել և իրականացրել է մի շարք գործողություններ 3 հիմնական ուղղություններով.

1. Որակի ներքին ապահովման գործընթացներ,
2. Որակի արտաքին ապահովման գործընթացներ,
3. ՃՇՀԱՀ-ի միջազգային վարկանիշավորման և կրթական ծրագրերի միջազգայնացման գործընթացներ:

### **Որակի ներքին ապահովման գործընթացներ.**

1. Առցանց դասալսումներ և դասերի իրականացման մշտադիտարկում,
2. Ուսանողների հարցում առցանց դասավանդման վերաբերյալ:
3. ՃՇՀԱՀ 2015-2020թթ. Ռազմավարական ծրագրի (պլանի) կատարողականի վերլուծություն,
4. ՃՇՀԱՀ 2021-2025թ.թ. Ռազմավարական ծրագրի (պլանի) նախագծի մշակում և քննարկում,
5. Տնտեսագիտության և շինարարության ոլորտների կրթական ծրագրերի ուսումնական պլանի վերանայում:

### **Որակի արտաքին ապահովման գործընթացներ.**

1. Մշակվել է և «Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոն» հիմնադրամին է ներկայացվել ՃՇՀԱՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմում-հայտը,
2. ՃՇՀԱՀ Ինքնավերլուծության աշխատանքային տարբերակի մշակում:

### **ՃՇՀԱՀ-ի միջազգային վարկանիշավորման և կրթական ծրագրերի միջազգայնացման գործընթացներ**

1. Աջակցություն բուհերի վարկանիշավորման միջազգային համակարգերում ՃՇՀԱՀ-ի ներառման գործընթացին (QS Rank, U-Multirank, Shanghai Ranking),
2. Աջակցություն ՃՇՀԱՀ-ի կողմից որպես գործընկեր համալսարան իրականացվող՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող հետևյալ ծրագրերին. ա/ FlexWBL Erasmus+, բ/ SAH Erasmus+, գ/TACEESM Erasmus+:



## 5. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2020թ.-ին ՃՇՀԱՀ-ում աշխատակիցների թիվը կազմել է 836 անձ, որոնք զբաղեցրել են **605.5** հաստիք: Աղյուսակ 5.1-ում ներկայացված են տվյալներ աշխատողների վերաբերյալ ըստ տարակարգերի (2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ):

*Աղյուսակ 5.1*

№	Կազմ	Աշխատողների թվաքանակ ( <i>մարդ</i> )	Հաստիք ( <i>դրույք</i> )
<b>1</b>	<b>Համալսարան</b>		
1.1	<i>Վարչական</i>	106	101
1.2	<i>Պրոֆեսորադասախոսական</i>	405	273.0
	<i>որից՝ ժամավճարային աշխատողներ</i>	26	
1.3	<i>Ուս.օժանդակ</i>	68	59.5
1.4	<i>Սպասարկող</i>	48	47.5
1.5	<i>Համալսարանի գիտական և ծրագրային այլ աշխատողներ</i>	137	
	<i>որից՝ հիմնական աշխատողներ</i>	23	
	<i>համալսարանից ներգրավված աշխատողներ</i>	114	
	<b>Ընդամենը</b>	<b>650</b>	<b>481.0</b>
<b>2</b>	<b>Մ.Արեղյանի անվ.ավագ դպրոց</b>		
2.1	<i>Վարչական</i>	7	7
2.2	<i>Մանկավարժներ</i>	46	40.3
2.3	<i>Ուս.օժանդակ</i>	1	1
2.4	<i>Սպասարկող</i>	12	12
	<b>Ընդամենը</b>	<b>66</b>	<b>60.3</b>
<b>3</b>	<b>Միջին մասնագիտական կրթության քոլեջ</b>		
3.1	<i>Վարչական</i>	8	7.5
3.2	<i>Պրոֆեսորադասախոսական</i>	100	45.0
3.3	<i>Ուս.օժանդակ</i>	1	1
3.4	<i>Սպասարկող</i>	11	10.75
	<b>Ընդամենը</b>	<b>120</b>	<b>64.25</b>
	<b>Ընդհանուր*</b>	<b>836</b>	<b>605.5</b>

\* - թվաքանակում ներառված է ֆիզարձակուրդում գտնվող 18 աշխատող՝ 14.5 դրույք

Աղյուսակ 5.2-ում ներկայացված են տվյալներ գիտական աստիճան և կոչում ունեցող աշխատողների վերաբերյալ (2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ):

Աղյուսակ 5.2

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ, ԿՈՉՈՒՄ	ՔԱՆԱԿ
Գիտությունների դոկտոր	42
Գիտությունների թեկնածու	179
Պրոֆեսոր	60
Դոցենտ	144
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս	1
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ	1
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ	9

Աղյուսակ 5.3-ում ներկայացված են տվյալներ ՃՇՀԱՀ պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքային ցուցանիշի վերաբերյալ:

Աղյուսակ 5.3

№	<i>Հիմնական, համատեղություն</i>	2019թ.		2020 թ.	
		աշխատողների միջին թվաքանակը	միջին տարիք	աշխատողների միջին թվաքանակը	միջին տարիք
1	Հիմնական	318	51	324	52
2	Համատեղություն	161	52	154	49
	<b>Ընդամենը</b>	<b>479</b>	<b>51</b>	<b>478</b>	<b>51</b>

## 6. ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ

### 6.1 Ուսանողական խորհուրդ

ՃՀՀԱՀ Ուսանողական խորհուրդը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ծրագրեր՝ նպատակ ունենալով նպաստել ուսանողական կարողությունների զարգացմանը: Ուսանողական խորհրդի աշխատանքներում ներառված են նաև մշտական խորհրդատվության տրամադրումը ուսանողներին, ուսանողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ապահովումը, ուսանողների տարբեր խնդիրների քննարկումներն ու ներկայացումը բուհի ղեկավար մարմին:

ՈւՄ-ն իր աշխատանքները կազմակերպում և իրականացնում է ֆակուլտետային ուսանողական խորհուրդների, մշակութային, սպորտի և ազատ ժամանցի, արտաքին կապերի, լրատվության և հասարակայնության հետ կապերի հանձնաժողովների միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել է տարատեսակ սոցիալական, կրթական, մշակութային, սպորտային, ճանաչողական, հայրենասիրական, ինտելեկտուալ, բարեգործական ծրագրեր:

Ուսանողական խորհրդի 2020 թվականի ծրագրերի մեկնարկը տրվեց առաջին անգամ կազմակերպված «Երիտասարդ ինժեներների ձմեռային ճամբար»-ով: Եվ, քանի որ ձմեռային ճամբարի օրերը համընկել էր Հայոց բանակի կազմավորման 28-րդ տարեդարձի հետ, մեր համալսարանի 70 ուսանողներից կազմված 8 ջոկատները անվանակոչվել են արցախյան ազատամարտի ֆիդայական ջոկատների անուններով:

Այս անգամ նույնպես ճամբարականները հանդես են եկել ինտելեկտուալ, մշակութային միջոցառումների շրջանակներում, չափել են իրենց ուժերը սպորտային առաջնություններում:

Հանդիպում է կազմակերպվել Մայր աթոռ Սբ. Էջմիածնի սոցիալական ծառայության կենտրոնի տնօրեն, քահանա տեր Մարկոս Մանգասարյանի, Արցախի հերոս Արկաղի Տեր-Թադևոսյանի՝ Կոմանդոսի և Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակիցների հետ:

Ճամբարի շրջանակներում անկացվեց «Տարվա լավագույն ուսանող», «Տարվա լավագույն ակտիվ ուսանող» մրցանակաբաշխությունները, որին ներկա էին համալսարանի ռեկտորը և ֆրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Ճամբարի ամենահետաքրքիր հատվածներից է եղել, «Մեկ քայլ դեպի ավելի խելացի և զարգացած բուհ» խորագրով աշխատաժողովը, որի շրջանակում ջոկատներն առաջարկել են գաղափարներ, ներկայացրել են դրանց կառուցվածքն ու ընթացքը:

ՈւՄ-ի հատկանշական ծրագրերից է ամառային արձակուրդների շրջանում, 2016 թվականից մեկնարկած մեկ շաբաթ տևողությամբ՝ վրանային «Երիտասարդ

ինժեներների ճամբար» խորագիրը կրող ուսանողական, ռազմահայրենասիրական ծրագիրը, որին յուրաքանչյուր տարի մասնակցություն են ցուցաբերել ավելի քան 100 ուսանող:

Այս տարի նույնպես քաղաք Ստեփանավանի ակտիվ հանգստի գոտում տեղի ունեցավ «Երիտասարդ ինժեներների հավաք 2020» ծրագիրը, պահպանելով հակահամաճարակային կանոնները :

Հավաքի շրջանակներում ուսանողները բաժանված են եղել հայկական արքայատոհմերի անուններով ջոկատների : Հավաքի ընթացքում կազմակերպվել և անցկացվել է սպորտային բազմաթիվ խաղեր, նկարչության մրցույթ, ճանաչողական և ուսուցողական արշավներ, սեմինար-հանդիպումներ, ազգային երգերի և պարերի, առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակներում պաշտպանության և այլ ուսուցողական բնույթի դասընթացներ:

ՈւՆ-ի աշխատանքների մեջ առանձնահատուկ նշանակություն ունի Արցախի Հանրապետությունում 12 տարի անընդմեջ իրականացվող «Հայերի հաղթանակի ուղին» խորագրով մշակութային, ռազմահայրենասիրական և բարեգործական ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ԱՀ-ում և ՊԲ-ի զորամասերում անցկացվել են թատերական, համերգային միջոցառումներ, բանակին ցուցաբերվել է օգնություն, որոնց մեջ ներառվել են հիգիենայի պարագաների հավաքածու զինվորներին՝ զորամասերին առաջին անհրաժեշտության պարագաներ, տեխնիկական սարքավորումներ, զինվորական սարքավորումներ, հատուկ անձրևապաշտպան վերարկուներ և այլն: Իրականացվել է նաև զորամասերի տարածքում ինժեներական և ստեղծագործական աշխատանքներ, մասնավորապես զորամասի պատերին նկարվել են քառօրյա պատերազմում իրենց կյանքը չինայած հերոսների դիմանկարները:

Ուսանողների համար կազմակերպվել է հատուկ ճանաչողական էքսկուրսիաներ Արցախի պատմական և տեսարժան վայրեր, զինվորական պատրաստվածության հատուկ դասընթացներ, կրակային վարժանքներ: Ծրագիրը հնարավորություն է տվել 400 ուսանողի այցելել Արցախի Հանրապետություն, ճանաչել Արցախ աշխարհը, ծանոթանալ զինվորական առօրյային և ամրապնդելու բանակ-հասարակություն-երիտասարդություն կապը:

Այս տարի ծրագիրը համաճարակի և պատերազմական գործողություններով պայմանավորված կրել է փոքր ինչ այլ բնույթ: Մասնավորապես պատերազմի ընթացքում ուսանողները ինչպես թիկունքում, այնպես էլ առաջնագծում իրականացրել են բազմաթիվ կամավորական աշխատանքներ, ցուցաբերել են հումանիտար օգնություն: Իրականացվել է համալսարանում սննդի և առաջին անհրաժեշտ իրերի հավաքագրում, որոնք տեղափոխվել են Արցախի Հանրապետություն: Ծրագրի շրջանակներում Ուսանողական խորհուրդը այցելել է Արզնի առողջարանում հյուրընկալված փոքրիկներին:

Ուսանողները դասավանդել են նկարչական հմտություններ, իսկ «Մարաթուկ» ազգային երգի և պարի համույթի կողմից սովորել են ազգային պարեր:

Ուսանողական խորհուրդը իրականացնում է մի շարք սոցիալական ծրագրեր, որոնցից հատկանշական են սոցիալապես անապահով և հասարակական ակտիվություն դրսևորող ուսանողների՝ համալսարանի ճաշարանից և Երևանի մետրոպոլիտենի երթերից անվճար օգտվելու հնարավորության ընձեռումը:

ՃՇՀԱՀ ուսանողական խորհուրդը հաշվետու ուսումնական տարում շարունակել է իր գործունեությունն ու ծրագրերի իրականացումը՝ ՈւԽ կանոնադրության համաձայն պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները: Ուսանողական խորհուրդն ակտիվ մասնակցություն է ունեցել ՃՇՀԱՀ կառավարմանը տարբեր հարթակներում (ՃՇՀԱՀ հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետների գիտական խորհուրդներ)՝ բարձրաձայնելով ուսանողությանը հուզող խնդիրները և դրանց լուծման մեխանիզմները: Ուսանողական խորհրդի միջոցով ուսանողները մասնակցել են ուսումնական գործընթացի կազմակերպմանը, համագործակցել համալսարանի ղեկավարման տարբեր օղակների և ստորաբաժանումների հետ: ՈւԽ-ն իրականացրել է ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկման դասընթացներ, սեմինարներ և միավորել է համալսարանի ուսանողական կառույցների ջանքերը՝ նպաստելով ուսանողության համար արդյունավետ աշխատանքային մթնոլորտի ձևավորմանը: ՃՇՀԱՀ ուսանողական խորհուրդը ֆակուլտետային ուսանողական խորհուրդների և հանձնաժողովների համակարգված և հստակորեն ուղղորդված աշխատանքով նպաստել է ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ռազմահայրենասիրական դաստիարակության, ստեղծագործական և ֆիզիկական զարգացմանը, կազմակերպել է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, ինչպես նաև զբաղվել է ուսանողներին հուզող բազմաթիվ այլ խնդիրների բարձրաձայնմամբ և լուծմամբ:

2020 թվականի ընթացքում ՃՇՀԱՀ ՈւԽ-ն կազմակերպել է շուրջ 30 միջոցառում: ՃՇՀԱՀ ՈւԽ նախագահությունը, ֆակուլտետային ուսանողական խորհուրդները և հանձնաժողովներն ապահովել են ուսխորհրդի բնականոն գործունեությունը, սահմանել համընդհանուր ռազմավարական նպատակներ և խնդիրներ, ինչպես նաև ներդրել նոր մոտեցումներ և մեխանիզմներ արդյունավետ գործունեություն իրականացնելու համար: ՈւԽ աշխատանքներում առաջնային նշանակություն ունի ուսանողներին գործող կրթական համակարգի, իրենց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Կազմակերպվել են քննարկումներ, սեմինարներ, մասնավորապես՝ 1-ին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու, ինչպես նաև գործող կրթական համակարգը ուսանողների համար ավելի մատչելի դարձնելու նպատակով: Առաջին կուրսեցիների համար անցկացվել է ամենամյա «Ուսանողական հիմնախնդիրները ՃՇՀԱՀ-ում» երկփուլ

սեմինար-դասընթացը, որի նպատակը ուսանողներին ուսանողական ինքնակառավարման գործընթացի մանրամասների և իրավական նորմերի մասին համընդհանուր գիտելիքներ տալն էր: Ծրագրին մասնակցել է շուրջ 500 առաջին կուրսեցի, որոնց մեծ մասը հետագայում համալրել է ՈւԽ անդամների շարքերը: Սոցիալական ցանցում ՈւԽ ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերը գործել են բավականին ակտիվ, և ունեցել զգալի որակական տեղաշարժեր: Մասնավորապես ֆեյսբուքյան էջում 2300 հետևորդ՝ շաբաթական ունենալով ավելի քան 1100 դիտելիություն:

Տարվա ընթացքում ՈւԽ-ն ակտիվ համագործակցել է Հայ Առաքելական եկեղեցու հետ և համատեղ իրականացրել միջոցառումներ: Մասնավորապես Հայ Առաքելական եղեկեցու ներկայացուցիչների հետ համալսարանում նշվել է տերունի անշարժ տոներից՝ Տեառնընդառաջը, որի շրջանակներում հոգևոր պատասխանատուները ներկայացրել են տոնի խորհուրդը և համտեսել ուսանողների ձեռքով պատրաստված հատուկ խորհուրդ և նշանակություն ունեցող ուտեստներ:

Հաշվետու տարվա ընթացքում ֆակուլտետային ուսանողական խորհուրդները իրականացրել են տարատեսակ մասնագիտական հանդիպումներ, դասախոսություններ, սեմինարներ □

- հանդիպում Հայ Կրթական Հիմնարկության (ՀԿՀ) ներկայացուցիչների հետ,
- սեմինար «Մարքեթինգ» թեմայով «Skill» Event management and marketing Company-ի հետ,
- դասընթաց՝ ArchiDutch ընկերության կողմից

Ուսանողական խորհուրդը նաև բազմամարդ երթերի և մոմավառությունների միջոցով իր հարգանքի տուրքն է մատուցել 1915թ-ի Ցեղասպանության 100 միլիոն անմեղ զոհերի, արցախյան և քառօրյա պատերազմների հերոսների հիշատակներին:

ՈւԽ-ն ակտիվորեն մասնակցել է համապետական և համաքաղաքային շաբաթօրյակներին, բնապահպանական միջոցառումներին և փառատոններին:

Ուսանողական խորհրդի կողմից տարվա ընթացքում տեղի է ունեցել մասնագիտական առարկաների վերապատրաստման դասընթացներ բարձր կուրսի ուսանողների կողմից, իրականացվել է առցանց հարթակում քննարկումներ, սեմինար դասընթացներ և այլն:

Հատկանշական էր համաճարագի պայմաններում անցկացված առցանց հանդիպում-քննարկումը «Անատոլիական պատմություն» ֆիլմի ստեղծագործական և դերասանական անձնակազմի հետ:

## ***6.2 Շրջանավարտների կարիերային ուղղված աշխատանքներ***

Շրջանավարտների աջակցման և կարիերայի կենտրոնը 2014 թվականից բուհում ստեղծել է շրջանավարտների էլեկտրոնային բազա, որի միջոցով մշտապես իրազեկում է

թափուր աշխատատեղերի, միջազգային և տեղական գիտաժողովների, բուհում իրականացվող լրացուցիչ կրթության դասընթացների և այլ օգտակար տեղեկատվության մասին: Բուհի 2019-2020 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրատուրայի 620 շրջանավարտներից 601-ը գրանցվել են կարիերայի կենտրոնի էլեկտրոնային բազայում (**շրջանավարտների 96.9%**): Այն շրջանավարտները, ովքեր գրանցված չեն էլեկտրոնային բազայում կենտրոնի կողմից ներկայացվող տեղեկատվությանը ծանոթանում են բուհի գլխավոր կայքէջից և կարիերայի կենտրոնի սոց. ցանցից:

Շրջանավարտների աջակցման և կարիերայի կենտրոնի կարևոր առաքելություններից է նաև շրջանավարտների մասնագիտական աշխատանք գտնելու հարցում աջակցությունը: Այդ նպատակով Կարիերայի կենտրոնը ունի համագործակցություն ոլորտում առաջատար կազմակերպությունների հետ, որոնք հաճախ տրամադրում են թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվություն, որը ուղարկվում է համապատասխան մասնագիտությամբ շրջանավարտներին:

Կարիերայի կենտրոնի հետ համագործակցության արդյունքում գործատուները պարբերաբար հրավիրում են շրջանավարտներին և ուսանողներին մասնագիտական պրակտիկաների, որոնք հետագայում ունենում են կարևոր նշանակություն մասնագիտական աշխատանքի ընդունվելիս: Կազմակերպությունների հետ համագործակցության հաջորդ փուլում կազմակերպվում են հանդիպումներ՝ ամրապնդելով բուհ-գործատու-շրջանավարտ կապը, քննարկումների արդյունքում շրջանավարտները պատկերացում են կազմում, թե աշխատաշուկայում ի՞նչ որակի մասնագետներ են պահանջվում:

Յուրաքանչյուր տարի անցկացվում է 2 տարի առաջ ավարտած շրջանավարտների հետ հարցում՝ աշխատանքային զբաղվածության մասին և ըստ այդ տվյալների կազմվում է յուրաքանչյուր ուս.տարվա շրջանավարտների պատասխանների ամփոփ հաշվետվություն: Հարցման արդյունքների հիման վրա կատարվում է նաև վերլուծություն և ուսումնասիրություն, նվիրված՝ պարզելու աշխատաշուկայի արդի պահանջները և մարտահրավերները, որի ավարտին փաթեթ-առաջարկը ներկայացվում է բուհի քննարկմանը:

Շրջանավարտների աջակցման և կարիերայի կենտրոնը ողջ տարվա ընթացքում մասնակցում է գերատեսչությունների, միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից իրականացվող կլոր-սեղան քննարկումներին, սեմինարներին և վերապատրաստման ծրագրերին:

## 7. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

*Հաշվետու տարում ՃՇՀԱՀ ֆինանսական գործունեությունը ներկայացված է կից հավելվածում՝ 2020թ. նախահաշիվ և կատարողական:*

## 8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- *Հաշվետու տարում իրականացվել են սոցիալական հետևյալ միջոցառումները՝*
- Բարձրացվել են ՃՇՀԱՀ ամբիոնների վարիչների աշխատավարձերը՝ մասնագիտական (թողարկող) ամբիոնների վարիչներին յուրաքանչյուր ամիս տրամադրելով 40000 ՀՀ դրամ, իսկ ոչ մասնագիտական ամբիոնների վարիչներին՝ 20000 ՀՀ դրամ լրավճարներ,
  - աշխատողների, ուսանողների, ասպիրանտների և հայցորդների գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդրվել է խրախուսավճարների տրամադրման նոր մեխանիզմ,
  - գիտահետազոտական թեմաներում էականորեն ընդլայնվել են ՃՇՀԱՀ հիմնական աշխատակիցների և ուսումնառողների ընդգրկվածությունը,
  - COVID-19 համավարակի կանխարգելման և հաղթահարման նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն է փոխանցվել է 2.000.000 ՀՀ դրամ,
  - COVID-19 վիրուսի ախտորոշման նպատակով համալսարանի 31 աշխատակից թեստավորում է անցել համալսարանի միջոցներով (260.000 ՀՀ դրամ),
  - համալսարանի 2 աշխատակից բուժզննում է անցել համալսարանի միջոցներով (50.000 ՀՀ դրամ),
  - համալսարանի միջոցներից Հայաստան համահայկական հիմնադրամ, «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» ԲՀԿ, Զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամ են փոխանցվել 6.204.000 ՀՀ դրամ (աշխատակիցների և Արհեստակցական կազմակերպության աջակցությամբ ընդհանուր փոխանցվող գումարը կազմել է 21.915.000 ՀՀ դրամ):
- *2020 թվականին իրականացվել են կառուցվածքային և հաստիքային փոփոխություններ՝ համաձայն ստորև ներկայացվածի, որոնց արդյունքում օպտիմալացվել է նաև 24 հաստիքային միավոր և տնտեսվում է ամսական շուրջ 3.000.000 ՀՀ դրամ:*
- **Լուծարված ստորաբաժանումներ կամ հաստիքներ՝**
    - Ֆինանսատնտեսական և տեղեկատվական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստիք,
    - Ռեկտորի առաջին տեղակալ-պրոռեկտորի հաստիք,



- Միջազգային կապերի գծով պրոռեկտորի ենթակայությամբ գործող «Միջազգային կապերի վարչություն»-ը լուծարվել է, պահպանելով «Միջբուհական և միջազգային համագործակցության բաժին»-ը և «Արտասահմանցի սովորողների բաժինը»-ը,
- «Գրանցումների բաժին»,
- «Տեսարտադրական լաբորատորիա (ստուդիա)»,
- «Լրացուցիչ կրթության բաժին»՝ մեթոդիստի հաստիք,
- «Ասպիրանտուրայի բաժին»՝ տեսուչի հաստիք,
- Տեխնիկական անվտանգության գծով ինժեների հաստիք,
- «Ներքին կարգապահության ապահովման բաժին»՝ հսկիչի հաստիք,
- «Լրատվության բաժին»՝ օպերատոր-մասնագետի հաստիք,
- «Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին»՝ համակարգչային տեխնիկական սպասարկողի և համակարգչային կաբինետների համակարգողի հաստիքներ,
- «Շրջանավարտների աջակցության և կարիերայի ենթաբաժին»՝ բաժնի վարիչի հաստիք:

• ***Նոր ստեղծված ստորաբաժանումներ կամ հաստիքներ՝***

- Ֆինանսատնտեսական և սպասարկման վարչություն՝ միավորելով «Կոմունալ սպասարկման բաժին»-ը և «Ավտոտնտեսություն»-ը,
- Աշխատակազմի ղեկավարի հաստիք,
- «Կադաստրի գիտակրթական կենտրոն»,
- «Նորարարությունների և ձեռներեցության աջակցման կենտրոն»,
- «Լեզուների կենտրոն»:

• ***Վերակազմավորված ստորաբաժանումներ կամ հաստիքներ՝***

- Քոլեջի տնօրեն-պրոռեկտորի հաստիքը վերանվանվել է՝ Քոլեջի տնօրեն,
- «Գիտահետազոտական սեկտոր» - վերակազմավորվել է՝ «Գիտական քաղաքականության վարչություն»,
- «Ծրագրերի իրականացման գրասենյակ»-ը վերակազմավորվել է «Պայմանագրային աշխատանքների համակարգման կենտրոն»:

• ***Ամբիոնների խոշորացում՝***

- ՃՇՀԱՀ 8 ամբիոններ միացման ձևով վերակազմակերպվել են 4 ամբիոնի: